

2457

15935

1364

255

457

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԷՐ
ԸՅՅՈՒՆԵԱՑ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԾԱՆՏԱՏՈՒԿ Ի Ս ՊՐԻՆԻՔ
1879

ՔԻՄԿԵՏՈՒԲ

ՆՊԱՏԱԿ

ԵՍՅ ԻԳՈՎԱՆ ՍԵՆԵ ԳԵՍՏԻՆԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՏԵՂ



ՎԵՐ ԾՈՒԳՈՒԹԻՎ
ՔԵՏՈՎՈՐ ՕՂՆԵ ԲՈՆ ԹԻՒՅՆ

ՊԵՏ

13935

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ս.ՋԳՍ.ՆՈՒԻՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏԵՍԼ Ի 11 ԱՊՐԻԼԻ 1879

ՅԻՒՍԿԻՏԱՐ

Ն Պ Ա Տ Ա Կ

ՀԱՅ ԻԳՐԱԿԱՆ ՍԵՈՒ ԳՈՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՊԱՍՏԵԼ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ



ՅՕԴ. 1. — Այս Ընկերութեան կրնայ անդամակցել ամեն Հայուհի ամուսնացած մէկ քաժնի համար մէկ արծաթ դահեկան վճարելով: Ուղղը կրնայ մէկ քաժնէ աւելի ստանձնել:

ՅՕԴ. 2. — Ընկերուհիք իրենց վճարած քաժնեգնոց փոխարէն Գործադիր Ժողովէն կնքեալ և դանձապետէն ստորագրեալ ընկալագիր կընդունին:

ՅՕԴ. 3. — Անձնիւր անդամ պարտի Ընկերութեան օգտին ծառայել:

ՅՕԴ. 4. — Այն Ընկերուհին որ յետ երկու արարութիւն ընդունելոյ ի Գործադիր Ժողովոյ չորս ամիս անվճար կը թող...

ղու իւր բաժնեգիրը հրաժարեալ կը հա-
մարուի :

ՅՕԴ. 5. — Հրաժարեալ կամ հրաժարե-
ցուցեալ ընկերուհիք ընկերակցական ամեն
իրաւունքներէ կը զրկուին և բան մը յետս
պահանջելու իրաւունք չեն կրնար ունենալ :

ՅՕԴ. 6. — Ընկերութիւնս կընդունի նաեւ
արական սեռէ նուիրատու բաժանորդներ ,
որոց միակ իրաւունքն է Ընկերութեան
տարեկան գործոց տպեալ տեղեկագիրն
ստանալ :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 7. — Ընկերութիւնս ունի Ընդհա-
նուր ժողով մը , Կեդրոնական Գործադիր
ժողով մը և Ճիւղերու Գործադիր Մասնա-
ժողովներ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 8. — Ընդհանուր ժողովը եօթմանա-
տուն ընկերուհիներէ կը բաղկանայ որոց
քառասունը կեդրոնէն և երեսունը ճիւղե-
րէն կընտրուին :

ՅՕԴ. 9. — Ընդհանուր ժողովը հինգ տա-
րին անգամ մը կը լուծուի և միամսեայ մի-
ջոցի մէջ նոր ընտրութիւնք կատարուելով
կը նորոգուի : Անգամք վերընտրելի են :

ՅՕԴ. 10. — Ընդհանուր ժողովն երեք
ամիսն անգամ մը կը գումարի , և կը շա-
րունակէ իւր նիստերը մինչեւ որ օրակարգն
սպառի :

ՅՕԴ. 11. — Ընդհանուր ժողովն արտա-
քոյ կարգի նիստ ալ կրնայ ընել , երբ իւր
դիւանը կամ Գործադիր ժողովը և կամ 10
ժողովականք հարկ դատեն :

ՅՕԴ. 12. — Ամեն ընկերուհի կրնայ Ընդ-
հանուր ժողովոյ նիստերուն ներկայ գըտ-
նուիլ իբր ունկնդիր :

ՅՕԴ. 13. — Ընդհանուր ժողովոյ Դիւանը
կը բաղկանայ առաջին , երկրորդ և երրորդ
Ստենապետներէ և Ստենագպիրներէ , զորս
ժողովը կընտրէ , որոց պաշտօնը մէկ տարի
կը տեւէ և որք վերընտրելի են :

ՅՕԴ. 14. — Ընդհանուր ժողովոյ պաշ-
տօնն է :

Ա. — Կեդր. Գործադիր ժողովն ընտրել .

Բ. — Կեդր. Գործադիր ժողովոյ և ճիւղե-
րու Գործադիր Մասնաժողովոց համարա-
տուութեան տեղեկագիրը լսել .

Գ. Եռամսեայ ելմտացոյցը վաւերացնել և
վարժարանաց յայտագիրը քուէարկել .

Դ. — Ներկայացեալ խնդրոց կամ առա-
ջարկութեանց լուծում տալ .

Ե. — Կանոնագրութեան վերաքննութիւնը կատարել :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 15. — Կեդրոնական Գործադիր Ժողովը կը բաղկանայ եօթն անդամներէ , երկուքը Ատենապետ և Դեր-Ատենապետ , երկուքը Ատենադպիր և Դեր-Ատենադպիր , երկուքը Գանձապետ և Դեր-Գանձապետ , և մէկը Համարակալ , որք սոյն պաշտօններով կընտրուին Ընդհանուր Ժողովէն և որք հաւաքաբար պատասխանատու են իրենց գործառնութեանցը :

Գործադիր Ժողովոյ պաշտօնավարութիւնը միամեայ է և անդամք վերընտրելի են :

ՅՕԴ. 16. — Գործդր. Ժողովոյ պաշտօնն է .

Ա. — Բաժնեգիններն և նուէրներն հաւաքել և ամեն օրինական նիստի մէջ իւր հաշուեցոյցն և յաջորդ եռամսեայ ելմտացոյցն ներկայել Ընդհանուր Ժողովոյ .

Բ. — Ամեն տարեգլուխ իւր գործառնութեանց համարատուութեան տեղեկագիրը մատուցանել Ընդհանուր Ժողովոյ .

Գ. — Ընկերութեան նպատակին գործադրութեան համար ամեն փոյթ տանիլ .

Դ. — Վարժարանաց յայտագիրը պատրաս-

տել և Ընդհանուր Ժողովոյ ներկայելն զինի , Կեդրոնական Վարչութեան Ուսումնական խորհրդոյ վաւերացնել տալէն ետքը անոր գործադրութեան հսկել .

Ե. — Ընդհանուր Ժողովոյ որոշումներն գործադրել :

ՃԻՒՂԵՐՈՒ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՔ

ՅՕԴ. 17. — Ճիւղերու Գործադիր Մասնաժողովք եօթն Ըկերուհիներէ կը բաղկանան և տեղական Ընկերուհեաց Ժողովներէն կընտրուին վաւերացմամբ Ընդհանուր Ժողովոյ : Այս Մասնաժողովոց պաշտօնը կը տեւէ մէկ տարի և անդամք վերընտրելի են :

ՅՕԴ. 18. — Ճիւղերու Գործադիր Մասնաժողովոց պաշտօնը և պատասխանատուութիւնը կեդրոնական Գործադիր Ժողովոյ միեւնոյցն է :

ՅՕԴ. 19. — Կեդրոնական Գործադիր Ժողովն և Ճիւղերու Գործադիր Մասնաժողովք ստիպողական պարագայից մէջ պատասխանատուութիւնն իրենց վրայ առնելով կրնան ազատօրէն գործել , Ընդհանուր Ժողովոյ յառաջիկայ նիստին մէջ գործին ստիպողութեան նկատմամբ , գրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ՅՕԴ. 20. — Ընկերութիւնս թէ Ընկերու-
 Տինքերէ և թէ այլ ազգայիններէ ամեն տեսակ
 նուէր կընդունի : Դրամական և դպրոցի
 վերաբերեալ նուէրներն ուղղակի՝ իսկ ու-
 րիչ նուէրք Կեդրոնական Գործադիր Ժողո-
 վոյ ձեռամբ վիճակահանութեան կամ վա-
 ճառահանդիսի դրուելով՝ անոր դրամական
 արդիւնքն Ընկերութեան պիտոյից կը գոր-
 ծածուին : Նուիրատուաց անուանքն եռամիսն
 անգամ մը կը հրատարակուին յԱզգային
 լրագիրս :

ՅՕԴ. 21. — Ընկերութիւնս արական սեռի
 մէջ կազմուած գործօն և ազգօգուտ Ընկե-
 րութեանց ձեռամբ պիտի հաստատէ իւր
 վարժարանները Հայաստանի և Կիլիկիոյ
 մէջ :

ՅՕԴ. 22. — Ընկերութեան հասոյթին 30%ը
 կը կազմէ պահեստի գումարն, որ իբր դը-
 րամազրուի շահու պիտի դրուի գիտու-
 թեամբ Ազգային Կեդրոնական Վարչութեան
 Տնտեսական Խորհրդոյ : Սոյն դրամազլխով
 յանուն Ազգային հաստատութեան մը հե-
 արզհետէ անժառանգ կալուածներ պիտի
 գնուին եկամուտն Ընկերութեանս նպատա-
 կին գործածելու համար :

ՅՕԴ. 23. — Երբ Գանձապետն 10 ոսկիէ
 աւելի ստակ ունենայ իւր քով պարտաւոր
 է յանձնել զայն դրամապահին :

ՅՕԴ. 23. — Ընկերութեանս նպատակն
 անփոփոխ պահելով՝ սոյն Կանոնադիրն երբ
 ուզուի կրնայ վերաքննութեան ենթարկիլ :

ՎԱԻԵՐԱՑԵԱԼ

ՅՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱԶԳ. ԿԵՂԻ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ





ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՈՒՂՂԵԱԼ ՆԱՄԱԿԱՅ
ՎԵՐԱՅ ՊԷՏՔ Ի ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՍՅԷՆ ԳՐԵԼ

ԱՌ ԳՈՐԾԱԳԻՐ ԺՈՂՈՎՆ ԱԶԳԱՆՈՒԷՐ
ՀԱՅՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Չիկտնցի Կոմիտայի

Մակնամար Կ Այլիս

S' ADRESSER

Au comité Exécutif de la Société
Asquanouvére Պայուհյա՛տ՝

A L' EGLISE ARMENIENNE DE
YÉNI - MAHALLÉ

SCUTARI - CONSTANTINOPLE

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014602

